ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

11.07.2024 15:06

2024 թվականի հուլիսի 6-ին և 7-ին ՀՀ փաստաբանների պալատը՝ ՄԱԿ զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի (UNDP) հետ համագործակցությամբ, լրատվամիջոցների ներկայացուցիչների և փաստաբանների համար կազմակերպել է աշխատաժողով:

Աշխատաժողովին ներկա են եղել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը, Փաստաբանների պալատի խորհրդի անդամներ, փաստաբաններ, ՄԱԶԾ սահմանադրական բարեփոխումների ծրագրի պատասխանատուԱննա Հակոբյանը և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

Բանախոսությամբ հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը, փաստաբան Արա Ղազարյանը, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արսեն Նիկողոսյանը և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի համահիմնադիր Լիանա Դոյդոյանը:

Ի թիվս այլնի, քննարկվել են հետևյալ հարցերը.

• Տեղեկատվության ազատությունը և տեղեկատվություն ստանալու սահմանափակումները, ապատեղեկատվության դեմ պայքար, գործնական խնդիրները
• Մինչդատական և դատական վարույթների լուսաբանման առանձնահատկությունները
• Խոսքի ազատության սահմանափակումները, պատվի, արժանապատվության (զրպարտությունից) պաշտպանությունը
• Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի, փաստաբանների հետ ՁԼՄ-ների համագործակցության առանձնահատկությունները
• Ատելության խոսքի իրավական բովանդակությունը և կանխարգելման միջազգային և ներպետական միջոցները:

Աշխատաժողովը տեղի է ունեցել Ծաղկաձոր քաղաքում՝ Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:



FOR ALL





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })